ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆ № 6 1962

ՎԼԱԴԻՄԻՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՄԻ ԱՆՏԻՊ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի (1780—1799 թթ.) գրագրությունները (2200 կոնդակ ու նամակ, 3500 նամակի համառոտագրություն) անփոխարինելի սկզբնաղբյուր են Հայաստանի և հարևան մի շարք երկրների XVIII դարի վերջին երկու տասնամյակների քաղաքական, մասամբ նաև տնտեսական կյանքի բազմաթիվ շրջաբանված կամ լրացուցիչ ուսումնասիրության կարոտ շատ հարցերի պարզաբանման համար։

Տարբեր անձնավորությունների ուղղված, զանազան առիթներով գրված ու տարբեր բովանդակություն պարունակող հազարավոր այդ նամակներն ունեն մի ընդհանուր նմանություն. նրանց շատերի մեջ հեղինակը, ընդարձակ կերպով կամ մի երկու խոսքով, տվել է Արարատյան երկրում կամ այլուր տեղի ունեցած ու հավաստի աղբյուրների միջոցով իրեն հայտնի դարձած դեպքերի ճշմարտացի նկարագրությունը։ Համարյա ամեն օր գրված այդ նամակներում բաց չի թողնված երկրի կյանքում տեղի ունեցած ոչ մի կարևոր իրադարձություն, ուստի և մեկը մյուսի շարունակությունը լինելով, ամբողջությամբ վերցրած Ղուկաս կաթողիկոսի նամակները այլ բան չեն, քան մի ընդարձակ տարեգրություն, կազմված դեպքերի անմիջական տպավորության ներքո, շարադրված ականատեսի և երբեմն այդ իրադարձությունների մեջ ակտիվ դեր խաղացած անձնավորության կողմից։

Լավատեղյակ և ստուգապատում հեղինակ է Ղուկաս Կարնեցին, դրանում առավել համոզվում ենք, երբ բաղդատության մեջ ենք դնում նրա հաղորդած տեղեկությունները հայ և օտար այլ աղբյուրների տվյալների հետ։ Նա քաջ գիտակցել է տեղի ունեցած անցուդարձերի նկարագրության անհրաժեշտությունը և անգամ մտադիր է եղել Աղա-Մուհամադ խանի արշավանքի ժամանակ Հայաստանում ստեղծված վիճակի մասին արված իր գրառումները հրատարակելու, որը, սակայն, չի հաջողվել[1]։

Ղուկաս Կարնեցու նամակների մի փոքրիկ մասն է միայն հրատարակված, ընդամենը 212 նամակ և 450 նամակի համառոտագրություն (որոնց ճնշող մեծամասնությունը՝ 195 նամակ և բոլոր համառոտագրությունները Գ. Աղանյանցի «Դիւան հայոց պատմութեան» Դ և Թ հատորներում). մնացածը դեռևս անտիպ է և կենտրոնացված է Երևանի Մաշտոցի անվան մատենադարանում։ Այդ անտիպ նամակների մեջ իր ուշագրավ բովանդակությամբ հատկապես աչքի է ընկնում 1790 թ. սեպտեմբերի 22-ին գրված նամակը, որը հասցեագրված է Կ. Պոլիս, հայ հոգևորականներից մեկին՝ Մինաս վարդապետին։ Ի տարբերություն մյուս բոլորի, այս նամակն ունի հատուկ վերնագիր՝ «Պատմութիւն

---

1 *Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 85ա։*